



05/5785-18
1/17. 8/5053-18

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 421

« 04 » 05 2018 թ.

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի ԹԻՎ 373 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության
2016 թվականի մարտի 3-ի թիվ 259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով
հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ)
կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2018 թվականի ապրիլի 13-ի
«Պատանի հրշեջ-փրկարարական հանրապետական առաջնության անցկացման մասին»
թիվ 373 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 2-րդ կետի և Հրամանի հավելված 1-ի 4-րդ կետի «2018 թվականի
ապրիլի 27-ին «Հայաստան» մարզական միություն հասարակական կազմակերպության
սպորտային հրապարակում, հասցե՝ Երևան, Ագաթանգեղոսի փողոց, 6 շենք (Կենտրոն
վարչական շրջան)» բառերը փոխարինել «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի
հրամանով սահմանված վայրում և ժամկետներում» բառերով.

2) Հրամանի հավելված 1-ի վերնագրի «2018 թվականի ապրիլի 27-ին» բառերը
փոխարինել «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի հրամանով սահմանված
վայրում և ժամկետներում» բառերով:

2. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Դ.ՏՈՆՈՅԱՆ